

Հ. ԲՈՒՒԱԱԲԱՌՈՒԹԻՒՆ.

(Տես յէջ 569)

144. Ապրիմ Բունտով.

Գաւառական անուն թ. Սուսան օրու կոչուածին:

145. Ապրիմ ճորով.

Թ. Ապտալ օրու, իբր թէ սակաւակեր ճգնաւորաց ուտելիք: Երկուքին որպիս սութիւնն ալ ստորագրուած չէ: յետինս կըրնայ ըլլալ Արեղախոտ: (Թ. 3):

146. Ապրիմ մեռնիմ, կամ Ապրիմ չապրիմ.

Մանր և բարդ կամ բազմաթերթ ծաղիկ, ըստ Մանանյի, (եր. 461): ըստ ոմանց Երիցուկն է, կամ որ և է անոր նման:

147. Ապրիվի?.

Ծառ. բժշկարան մի յիշէ:

148. Ապրշումի ճառ.

Խղուանից կամ Կափիի կողմերը յիշուի: (Մեղու, իթ, 83):

149. Ապրուր.

« Ինքն դեղին խոտ-մն է, սեւգուն փշեր ունի, և ի Սնակուի կերպ է, և անուշ ո հոս ունի »: Այսպէս Ամիրտ:

150. Ապրսամ կամ Ապրսադ.

Ոչ է բոյս, այլ բռւսեղինի հիւթ կամ եղ, Տես Բարսան:

151. Արաքեալ.

Ասարայ բժշկարանի բառից մէջ գրուած է, « Հավարիօն՝ Առաքեալն է »: բացց այդ Հավարիօն անուն ուստի ծագած է: — չեմ կարծեր որ ըլլայ Ամիրտողվաթայ յիշածն « Հավարի, որ է լուացած ցորենին ալուրն, և բարակ մաղած և բած »:

152. Արևելախոտ.

Միայն Վաստակոց զիրքն յիշէ առասպելաբանութեա ՚ը այս խոտս, բնիկ անունը խատիսալ ըսելով. «Վասն խոտին որ անուանեալ կոչի խատիսալ, զոր ու » մանկ Ագիծախոտ անուանեն: Ինքն հետ կընտանացն լինի, և խաժարրէ » զրոյան, եւս առաւել զրակայն. արդ առաջինքն գտեալ են գեղ այն խոտին, » և Դիմոկրատէս վկայեալ է զործոյն. և է գեղն այս. տանին կոյս աղիկ մի » յայն տեղն ուր խոտն լինի.. և տան ի ձեռն խօսող մի (աքլոր): որ գոյ շորէ » ի վերայ տեղացն՝ ուր խոտն լինի. նա ի նոյն ժամանակ լըքի խոտն և շորան նայ, և սերմանքն զերծանին և արքինանան: Եւ ճշմարտած է որ զերգ խոտս » ասանի ի կուտէն և ի խօսողէն, նա և թէ կենդանի առիւծ երթայ' խրտչի » ի նմանէ. և որ առնու զերմն և խօսողի արեամբ մնչէ և ցանէ այս խոտս՝ » բնաւ շմերձենայ ի յինքն ո:

153. Արևելմորենի.

Բառզիրք մի այսպէս կոչէ Բաստոս կամ Բյաստոս օտարալեզու բայսը, որ ծանօթ չէ այդպիսի՝ հաւանօրէն խանգարեալ անուամբ. քիչ մի մօտաւոր է Վյարժին Տօման: յոյն անունն՝ որ նշանակէ Գի, Լ. Iuniperus Sabina. մեր կին թժշկարանին ստորագրութիւնն ալ մօտենայ այս ծառոյս պտղոյն, բայց լյորենեաց ցեղէն գուշակութ. «Առոյժմորենին, կ'ըսէ՛, փոթոթ է. զէերն » եփեալ և զոստն՝ զիորանցութիւն արզիկէ.. Որ զպտուզն ուտէ՛ լընդացն ո օգտէ, ու զփորն կապէ... Արմատն խառնեալ ընդ մեղր և տալ? (դալ?) օգտէ » կրծացաւոյ և հազի՞ն: — Ցիշեալ տեսակ Գի և մանաւանդ Բարձրաձաղկն, I. Sabina excelsa, կամ Sabina orientalis, նշանակուած է ի Սիսական նահանգի (Գրասպաղ):

154. Արկայծ.

Ոչ ի զբոց այլ ի լրոյ. ցամնկ դաշտային խոտ մի է որ շուտով բռընկի. անկէ առած է անունը, բնշպէս և Թ. Արէշ օրի, Պ. Ազէրիկից:

155. Արնուկ.

Այս ալ ի լրոյ է, բայց բնշպէս ըլլալն չէ բացատրուած:

156. Արուակարոս.

Աթանասեանն գրէ (Եր. 86) կարոսի ցեղէն բոյս մի ոտնաշափ բարձրութեամբ, մանր և դեղին փայլուն տերեւով. առուակներու եղերք գտուելուն համար այս պէս կոշուած:

157. Արուելդ.

Դաւիթ Ասլանորցին կու յիշէ Աւգէր ծաղկի հետ (տես). թէ և դրուածը օրի-

Նակող մի Արուեղներու տեղ՝ Արուեղներու դրած է. բայց հեղինակն ընդհան-
րապէս ուր երկու կամ այլեւայլ ծաղկներ կու յիշէ՝ այն տեղ ննտ բառով զուգէ:

158-9. Արուելոյտ.

Ամենածանօթ և պիտանի բոյս, կեր ընտանի անասնոց. ծաղկին գունովը,
քիչ մ'ալ տերեւոց ձեւով կամ վրայի պիսակով՝ յայլեայլ տեսակ զանազանի,
և թերեւս այս պատճառաւ զանազան տնուններ ալ ունի մեր լեզուաւ ար. և
նախ իր միացեալ կամ միակից երեք տերեւներուն համար Եսատերեն կամ Երեց-
նուի, ինչպէս և Լ. Տրիֆո-
լիոս, յարմէ Փ. Տրեծե
Բ. Տրիլիստնիկ. Աս-
պատ. Ալպախնձոր (թ.
31), Գնադադայիկ, Երե-
զան, Հանդադոշ և այն.
զորով տես ի կարգին: Ա-
միրտ. Ռաստպայ՝ ձեմեց-
քասի ներքեւ գրէ: «որ
» Թ. Երանձա կու ասէ,
» և Հ. Ապիոտ, և ինքն
» երեք ցեղ է. լան այն
» է որ գալար լինի և կա-
» նանչ լինի.. և ինքն ի
» գիրացընող գեղերուն
» է, բայց ստամոքին զէն
» կու առնէ... Ասէ Պտ.
» թէ Ֆասֆասայ ասեն
» չոր Եօնձային, որ Պ.
» Ասպատ ասեն, և Հ.
» Ապիոտ ասեն »: Բայց
Ասպատ բառն ալ գոր-
ծածեն Հայք, վասն զի
զատ տեսակ մի է, ի լ.
կոչուածն Medicago. Փ.
Luzerne.



Արուելոյտ,

Արուելոյի քանի մի տեսակները յիշէ Միկիթար Գոշ յառակին (ԼԳ). «Գնդա-
ն ծաղիկը և կորնգան և Խոլորձ (189), Արուելոյտ կապոյտ և Սէզ և նմանք
» սոցին, ծաղր եղեալ զջինկ՝ ասէին, եթէ Զի՞ է զի մեք զուարձացեալ կամք,
» և նա ծիւրեալ գեղնութեամբ » և այն: — Բարդ կամ կից անուամբք յիշին
հետեւեալ տեսակը.

160. Խշառուոյտ.

Որ է գեղին Առաւայսն. այդ կենդանայ անուամբ յիշեր են և հին յոյն հեղի-
նակք, և նոյն բառիւ նաեւ Լ. Onobrychis. Փ. Espangette. ինչպէս գրէ և Ա.



միրտոլվաթ և կ'ըսէ. « Շնուապրուխս. որ ի գլուխած տեղեր կու լինի, և ի ո թաց տեղեր կու բռւսնի. երկայնութիւն մէկ թիզ կու լինի, և տերեւն մանր » որպէս Ոսպան տերեւ, և կարմիր ծաղիկ ունի »:

161. Եղան Առուղյութ.

Անուամբ նոյն բացց տեսակաւ շատ տարբեր, մարդաշափ բարձր կ'ըլլայ և ճշ-դիր ալ ունի. ծաղիկն գեղին ծովածեւքախուի. գործածուի դեղի համար, Մա-նօթ է Մշյ Կողմերը:

Առուղյութի հունտ ալ յատուկ յիշուի ի հին և նոր բժշկարանս արար բառին քով Պղղու-է-Ճարմիր, որ Պ. Թուովամի Քիրիկ կ'ասեն, ըստ Ամիրտ. և ի Հիրազ Քա-ն մասր? կ'ասեն. և լան այն է որ ածուց լինի և ի իլ լինի »: Հասարակ Առուղյ-տէն տարբերիլն ալ նշանակէ Խազկան որդուց (1) վկայութեամբ, թէ այդոր ափխանն իր չափով՝ Առուղյուն է: Հայերէն ալ Ճարմրուկ կ'ըստի. Փ. Քօքետե.

Այս հայերէն բառերով անուանուածներէն զատ՝ Առուղյութի շատ տեսակներէն քասնի չափ յիշեն բռւսարանք ի Հայս, որոց մին յատուկ Հայկական, Տ. Արտե-ռուս ի լեռնակողմանն. Գիսազլուխն Trichocephalum ի Մասկս. Նկունն. Տ. Կո-նդամ ի Մուշ, Բարերդ, և այլն:

162. Առսան?

Ըստ Ամիրտ. այս ալ Առուղյութի տեսակ պիտի ըլլայ, եթէ առոյգ է զրուածն. վասն զի Յալափ անուան տակ զրէ. « Որ է Բատոպան, որ Հայերէն Առսան ա-» սեն »: Դարձեալ Յ տառի (2) շալակաց մէջ զրէ (Փէ տեղ Թ), « Յալաթ, որ է » Բատոպայ ո: Տեսանք որ և Բատոպայ Առուղյուն է: Իսկ Յալափ կամ Յալաթ անձանօթ է ինձ:

163. Ասիկ.

Ալոճի տեսակ պտուղ. գրէ Ոերաստացի ոմ:

164. Ասլանն.

« Որ է Իսլին չչնաւ! ինքն խոտ-մե է՝ որ ի աւզին մէջն կու բռւսնի, և ո յերկան յերկան և դեղին դեղին է. Զերկուամ կու նմանի. և ներկրարքն կու » բանին զինքն Եւ յորժած զտերեւնին եփես և սպեղանի առնեա՞ օգտէ պալ-» դամի ռուէցնուն.. Եւ մէկ ցեղ այլ կու լինի՝ որ ի շոր տեղեր կու բռւսնի, և ո ծաղիկն ի Աղվէշնկի ծաղիկ կու նմանի »: Պէյթար ասոր համանիլ անուն մ'ալ զրէ Լիրուն. իսկ բոյսն է վայրի կանչյուն (Քնենդա). բայց այս Ասլանն նշա-նաւոր անունը՝ ոչ նա յիշէ և ոչ այլք:

1. Անուանի և պիտուն բժիշկ Պարսիկ: Թ. գարու մէջ, կոլուկ շատ նեղ Մուհամմատ որդի Զագարիայի, բայց աւելի շատ՝ Խազկէ, Բուղիկ, Խազէս, յանուն Ուշյ քաղաքի ուր ծնած է:

2. Եիշենք որ Ամերտուլաթ՝ մեր նշանամէր Ա. կամ և սկսած բառերը՝ Յ տառի գրէ, ինչ-պէս Արարը՝ Յարար:

165. * Ասխիս Ք.

« Որ Թ. Սախող բիբանի ասէ » ըստ բժշկաբանի:

166. Ասղուկ կամ Ասեղուկ.

Սուր սուր թելի նման խոտ, ուսկից կու զգուշանան գառներն ուտելու:

167. Ասմաղուն կամ Ասմանուն.

Գրուի ի բառս Գալիենոսի և կու զուգի Լուրջ Շոշանի:

168. Ասորեկ.

Որ է Ար. և Պ. բառիւ Ճարճիր կամ Ճարճրուկ, լ. Erico, Փ. Roquette, Բ. Ռուլեկա Ծանօթ բանջար և աղցան ուտելիք. Երկու տեսակ է ըստ Ամասիացոյն. « մէկն ածուիքն լինի և մէկն վայրի լինի. և լաւն այն է որ յածուցն » լինի... Եւ Հարոնուկ ասեն անասուն մի կայ. թէ խայթէ՝ զշարութիւնն տան նի. Եւ զրած է ի Խասիաթին զիբքն (Վաստակոց, Մշակութեան) թէ որ ո զշարճիքն ծեծէ և զօսրն առնու և ի թթու Նոան տակն լնու, քաղցր Նուռ » լինի. և այն որ Վայրի Ճարճիքն է՝ խարտազ կու ասեն ». — Տես և Ճարճիք: Գալիենոսի բառից մէջ զրուի « Եւզոմմ Ասորեակ » ուղին՝ Եւզոմմ Եւչարօն. զոր յիշէ և Պէյթար ի Գիւսկորիսեսայ զրոց, Ռոզիմոց զրելով, *ոյցիցի*:

Ասորեկի անուամբ մեր բժշկաբանք կ'իմանան նաեւ անոր մերձաւոր կոսմով և Զրկուեմը. մէկն զրէ, « Ասորեկ՝ որ է Զրկուտիմն, որ է Ճարճիքն ». միւսն և Կարդամոնց (Cardamom) Ասորեակ կամ կոտեմն »:

Զարմանալիք կամ Գետաքննական բան մ'է՝ որ մեր Ասորեկ կոշածը՝ Ափրիկեցիք ալ հիմայ Ասորիկ կոչեն, ըստ Վկայութեան Ատանասոն բուսաբանի, որ շատ տարիներ կեցաւ ի Աննեկամպիա:

169. Ասուիկ.

Ասրի նման կակուղ և փափուկ խոտեղին մի, ըստ նոր զրողի առ մեզ:

170 * Ասպաղօլ կամ Ասպայուլ.

Պարսկերէն է. բժշկաբան մի յիշէ « Ասպաղօլի Լուապ » դեղ, Տես Զդախու:

171. Ասպանակ.

Նարեկի ազօթազրոց Լուծմանց մէջ կ'ըսուի, « Ասպանակն է Ասռապիսեայ փայտն »: — Sarapias անուամբ բոյս ճանշնան բուսաբանք կողուճիկներու (Օրուհիք) ցեղէն. բայց բայց կ'ուզէ նշանակել մեր հեղինակն, թէ Եզիսպտացոց Աերապիս շաստուածոյն զԱնարկը՝ որ էր զրիւ մի, իբր նշանակ առատութեան բերոց:

172. Ասպամտ 2.

Սպիտակ Մանանեխն է, ըստ բժշկարանի մի:

173. Ասպամտ.

Տես ինչ որ գրուած է Առուցտի Համար, որոյ մէկ ազդն է ըսուեցաւ. Լ. Medicago. Փ. Luzerne. Ռ. Մեծունակ. Ըստ Ամիրտ. պարսկերէն նյանակէ Զոր Առուցտ Եւրոպացի տեղագրողք լիւն այս տեսակս յայեւայլ կողմանս մեր երկրիս, ի Կարին, յԵրախսայ Հովտի, յարևելեան հիւսիսային գաւառու. ինչպէս. Մատզուկ տեսակն, M. Glutinosa, ի ստորոտու Մասեաց. M. Papillosa (Պիսակոս) ի Կարին, Թուրքում. — M. Gerardii ի Շահպուլագ Արևնեաց:

174. Ասպուզան..

Որչափ որ մեր հեղինակը կարճ խօսքերով կ'իմացընեն, գեղեցիկ և անուշահոտ ծաղիկ մ'է լիւնային. ինչպէս Մին. Գորի (Լ) առանի միայէ. « Եզեւ երբեմ գըծ-ն տութիւն ի մէջ լիւնականացն և դաշտականացն ծաղկանց. զի Հօրուսն և ո Մօրուսն և Ասպուզանն և այլք այսպիսիք՝ ոչ տանեին պարսաւանացն Դաշտա-ն կանաց, Արբայածաղկին, կակաջին և այլց նմա-ն նեաց, զի ստղտամինին իրբեւ տմարդիք և անի-ն մասսք, և զինքեանս հանճարեղս և ի բժշկու-» թիւնա պատրաստու», բայց բուսոց թագաւորն կու յանդիմանէ զանոնք. և յիշեցնելով որ ինքն ամե-նուն յարմար տեղ տուեր է, և կըրնան մէկմէկու պիտանի ըլլալ. « այսպէս համազեաց զնոսս »: — Վաստակոց զիրքն (գլ. ՄԽԸ), խրատէ « ի միջոց ծա-» ռոցն երակ երակ անուշահօտ ծաղկունն սերմանել, « Վարդենի, Մանուշակ, Զաֆրան, Մնփուր, Աս-» պուզան, Նոնէս, և այլ այսպիսիք ». յոյն բնագիրն շրու ծաղիկ միայն դրէ, հայերէնին առաջին երեքն և Շուշան, որով շիմացուիր Ասպուզանի ինչպէս կոշուիլն յօտարաց, որոց թերեւո ծանօթ ալ չէր, բնիկ ըլ-լալով մեր երկրին սահմանաց. որ և մեր գպրոթեան առաջին հեղինակի մէջն յԱգաթանդեղու՝ յիշուի Աս-պազան դրութեամբ ալ. անունն յայտնապէս Հայոց և Պարսից լեզուի ձայն կու տայ: — Փիմիա զիրքն նորալուր բան մի կ'ըսէ և անունը յայտնէ. « Ասպու-» ռ զան ծաղիկն Հալոզի ներկին կ'ասեն. Թուրքն՝ « Ասփուր լիշակի կ'ասէ ո. (տես Ասփուր): իսկ հին թժկարանն, « Աղջապն ՞ Ասպուզան ո, զուգէ. և ուրիշ տեղ մի իրեւ գեղ, և ԶԳումամորին և զԱսպուզանի տակն եփէ ջրով և խմցո ի յանօթից ո: Այս նուս-խայս ալ կու յանդիմանէ վերոգրեալ բամբասող դաշտական ծաղկըները, որ



Ասպամտ.

զլեռընցիս բժշկութեան անյարմար կ'ըսէ՛ն . իսկ Ասպուզանի լեռնային ըլլալուն՝
վկայէ և Սալածորցին, ականատես ՚ի Կարնոյ բարձրաւանդակին, նաեւ գունզյն.

« Ան Ասքօսան ծաղիկ մի կայ, իսկի վար չի գար լեռներուն,
վաս կապուտ. հոտն է աակաւ ո»

Եւկրիմանեանն այս բոյսա համարի Լ. Պայլլսոն, որ յատուկ նշանակէ վայրի Բըզ-
րումն (տես), Լուսախոտի տեսակ մի. բժշկարանք ոմանք զուգեն զայս Ասֆայովի
կամ Խապաղուցի, որ է Պ. Խափեղուչ, լուղջաւ, և նշանակէ Ջիականջ. — Ուրիշ
բժշկական բառից հաւաքման մ'ալ մէջ զրուի, « Խապահարի? քամուքս՝ Աս-
պուզան »:

ՅԱՅ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՄՆ



(Տես յէշ 379)

ՊԵՏԵՐՄԱՆԻ ընդարձակ Քերականութիւնը քննազատեց անուանի
բանասէրն և ազգագիտական Լորէնց Դիքլնապի (1806—1883) յամաթեր-
թիւն Պելլինի Jahrbücher für wissenschaftliche Kritik, ի թիւն
սեպտ 1843 ապրիլ (Հատ. Բ. 441—455): Բազմաթիւ էին այն ատեն
հայերէն լեզուի ուսման պարագաղ գերմանացի գիտունք, որոց մէջ յիշասա-
կութեան արժանաւորը են Դիէտրիխ Փրիսթոֆ Վոն Ռիմսէլ (1784—1859),
ուսուցիչ պատմութեան ի Մարդուրի, որ ի Համայնագիտակ բառարանին
էրշի և կրուպէրի, Հայաստան յօդուածին տակ 1820 ին հրատարակեց յօ-
դուած մի Հայաստանի վրայ ընդհանրապէս: Նոյն երկասիրութեան մէջ ի-
րենց այրուքնական շարակարգին տակ կը զտնենք զանազան յօդուածներ
այլ և այլ հայ մատենազրաց վրայ: — 1844 ին թէնեղիկտ Ռուէլթէ ա-
ռաջին թարգմանութիւնն ըրաւ կորեան սրբոյն Մեսրոպայ վարուց՝ համեմատ
բնագրին ընծայելոյ ի լոյս ի Ս. Ղազար յամի 1833, խորագրով. Գո-
րիսոն's Lebensbeschreibung des heiligen Mesrop. տպագրեալ ի Տու-
պինկէն, ի 52 էջս, և հրատարակեալ ի բաներորդ հինգերորդ տարեղարձի
ամբառնալոյ ի գահ վիւրմէմպէրի Գուլբէլմո Ա. Թագաւորի: — Եկեղեցական
Բառարանին (Kirchenlexicon) Վէցէրէ և Վէլդէի, հրատարակելոյ ի Ֆրի-
դուրիկ, որ և գաղղիական թարգմանութիւն մ'ալ ունի և կրկին տպագրու-
թիւնք (Dictionnaire encyclopédique de théologie catholique) ի 25
հասորս, 1858—1865, Ֆրիգուրիկի արևելեան բանասիրութեան իմաստուն
ուսուցիչն այլ և այլ յօդուածներ գետեղեց հայ մատենազրաց վրայ, զոր ո-